



187. ՄՈՐԸ ՀՐԱՄԱՆԵԳՑԸ ՏՂԱՆ Ա. ԱՆՈՒՄ

Մին շատ խըելումք մարթու մին անխելք կնեգյ ա ինում: Տահանց ինում ա էրկու տղա: Տղեն մինը հորն ա քաշում, էն մինն էլ՝ մորը: Իրեք-շորս տարե վըեր անց ա կենում, մարթը մըեռնում ա: Տղեցյը մծանում ըն, ըխշըդանքու հսնում, ըսկում տոնը պահելը, էտ խըելումք տղան կարում ար իրան անխելք ախաղորը հնեց պինըցնե, վըեր միշտ օքութ ինի:

Մին օր էտ անխըելք ախաղըերը կյամ ա խըելունք ախաղորը կոշտը, ասում.—էն ա էսհինչ ծմակումը մին կորած օղտ կա, լիքը խուրջինն էլ մեշքավը քցած: Խըելումք ախաղըերն ասում ա:— Քյինա առաջըտ քցի, պեր: Տա քյինամ ա օղտն առաջը քցնիմ, պիրում իրանց հայաթը: Էտ խըելումք տղան խուրջինը պեց ա անում, տըեսնում մեշը լիքը վըեսկե յաւ: Գյունդինմ ա, վըեր մարը կըրը-լական չի պիրանումը պահն, քյինամ ա կոշտը, ասում.—Մամա, պապան քյասիր ա իլալ, կըրեցալ չի քեզ հրսաներյ անե, քու հրսաներյըտ ես ըմ ըննական: Մարն ասում ա:—Հա՛, քե մատաղ, ըրա, դադիտ տանեմ: Տա մին խոր փոս ա կտրում, օղտը մորթում, կուտուր-կուտուր անում, աժում մեշը, վըեսկեն եր օնում, տանում լավ պատրաստություն տըեսնում, մորը հրսաներյ անում, մնացածն էլ տանը պակաս-պաստը դժողցնում, ամմեն հինչ փոխում, ըսկում մըթըվորի ապրելը:

Մին քանի վախտ վըեր անց ա կենում, էրկու մարթ օղտեն

շու կլալավ հանում ըն էտ շենք, ըխպըրան մուտանում, տըհս-
նում մին մըեծ կնեղյ կոժը լըցած տանում ա: Մուտանում ըն, էտ
կնդանն անա հըրցնում, թա պա իստի օդտ շը՞ս տըհսալ խուրցի-
նը մեշկին: էտ կնեղյն ասում ա:—Տեսալ ըմ, դադատ տանեմ, պա
հունց շը՞մ տըհսալ, խուրցինն էլ լիթը վըեսկե յար, Տահանք հըր-
ցընում ըն, թա պա բիզի վըերդե՞ղ ա թյեցալ, էտ կնեղյն ասում
ա:—Տղերլը օդոր պերալ ըն, մորթալ, կուտուր-կուտուր ըրալ,
նի տվալ փոսը, վըեսկեն եր կալալ, Հրցընում ըն, թա տա հիբի
յա իլալ, էտ կնեղյը թա հրալներս տըոնեն, Սահանք ասում ըն
էս կնդանը խըելթը տըեղը շի, տըհսնաս տրա հրսաներլը քանի
տարե առաշ ա իլալ: Տի էլ թողում ըն, հղեն փոխում, օրիշ տըեղու:
յիրա քլինամ:

